ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

Հ/Հ	Համայնք	Միջոցառում	Օրը	Ժամը	Վայրը
1	Սպիտակ	Սպիտակ համայնքի ավագանու հերթական նիստ	16.06.2020թ	15:00	Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճ ք. Սպիտակ Շահումյան 7

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Digitally signed by SAHAKYAN GAGIK 3707650340 Date: 2020.06.09 17:02:58 AMT Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Գյուլազյան

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 16-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

2. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ավետիսյան/

3. «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված տրանսպորտային միջոցը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Գրիգոր Վալոդի Նազարյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հարություն Ռաֆիկի Սահակյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հովհաննես Համլետի Շիրոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Ռազմիկ Մանվելի Թումանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի «Սպիտակ համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 57-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված «և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝» բառերը փոխարինել «կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝» բառերով.

2) որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերության մեջ նշված «ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝» բառերը փոխարինել «օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝» բառերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

««Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 13.02.2020թ. թիվ ՀՕ-95-Ն օրենքով փոփոխություններ են կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածներում:

Հիմք ընդունելով վերը նշված փոփոխությունները՝ որոշման նախագծով նախատեսվում են փոփոխություններ կատարել Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որոշման նախագծի ընդունման նպատակն է Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշումը համապատասխանեցնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության տրամադրման դիմաց իրականացնել համայնքի բյուջեի եկամուտների մաս կազմող տեղական տուրքերի գանձումը:

ԱԿՏԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունվող ակտը նորմատիվ բնույթի իրավական ակտ է, քանի որ, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար և փոփոխություն է կատարվում նորմատիվ բնույթի իրավական ակտում:

Սույն որոշման նախագծի մշակման գործընթացում ներգրավված ստորաբաժանումներն ու անձինք են.

1.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

2.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին

3.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունվելու դեպքում Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեում նախատեսվում է եկամուտների ավելացում:

ՏԵՂԵԿ ԱՆՔ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծն ընդունվելու դեպքում այլ իրավական ակտեր ընդունելու կամ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելուն՝ համաձայն հավելվածի:

2. Աճուրդում հաղթող մասնակցներից համայնքի բյուջե գանձել հողամասերի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

ՀԱՎԵԼՎԱԾ
Սպիտակ համայնքի ավագանու
2020թ. հունիսի -ի թիվ -Ա որոշման

ՑԱՆԿ
ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

Լոտ	Հողամասի հասցեն	Ծածկագիրը	Մակերեսը հա	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին (ՀՀ դրամ)
1	ք.Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 95	06-006-0185-0046	0,09996	Բնակավայրերի	խառը կառուցապատման	հասարակական հարկաբաժնով բնակելի տուն կառուցելու	527 788
2	ք.Սպիտակ, Գրիգոր Լուսավորիչ թաղամաս, թիվ 48	06-006-0188-0166	0,12798	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	հասարակական հարկաբաժնով բնակելի տուն կառուցելու	675 735
3	ք.Սպիտակ, Ն. Աճեմյան փողոց, թիվ 106	06-006-0271-0282	0,01385	Բնակավայրերի	հասարակական կառուցապատման	վարսավիրանոց կառուցելու	73 128
4	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան, թիվ 386	06-006-0517-0040	0,00443	Բնակավայրերի	բնակելի կառուցապատման	ավտոտնակ կառուցելու	23 390
5	ք.Սպիտակ, Չարենցի փողոց, թիվ 62	06-006-0130-0113	0,099	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական	արդյունաբերական օբյեկտների	արտադրամաս կառուցելու	522 720

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացված AP-17 (GAZ-53-12) մակնիշի (հաշվառման համարանիշ 863 LL 70, նույնականացման համար XTH531200J1173293) տրանսպորտային միջոցը մինչև 1 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Վարձակալության վճարի նվազագույն չափը սահմանել 2 000 Հայաստանի Հանրապետության դրամ 1 ժամի համար:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԳՐԻԳՈՐ ՎԱԼՈԴԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Գրիգոր Վալոդի Նազարյանը 2019 թվականի ընթացքում բացակայել է ավագանու 13 նիստերից ավելի քան կեսից՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Գրիգոր Վալոդի Նազարյանի լիազորությունները:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հարություն Ռաֆիկի Սահակյանը 2019 թվականի ընթացքում բացակայել է ավագանու 13 նիստերից ավելի քան կեսից՝ Սպիտակ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հարություն Ռաֆիկի Սահակյանի լիազորությունները:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԼԵՏԻ ՇԻՐՈՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հովհաննես Համլետի Շիրոյանը 2019 թվականի ընթացքում բացակայել է ավագանու 13 նիստերից ավելի քան կեսից՝ Սպիտակ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հովհաննես Համլետի Շիրոյանի լիազորությունները:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՌԱԶՄԻԿ ՄԱՆՎԵԼԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Ռազմիկ Մանվելի Թումանյանը 2019 թվականի ընթացքում բացակայել է ավագանու 13 նիստերից ավելի քան կեսից՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Ռազմիկ Մանվելի Թումանյանի լիազորությունները: